Խեղճ Գէորգը բոլոր ունեցածը ծախեց, տուն-տեղ ամէն բան թողուց, Բաղդատ գնաց կինն ու քսան տաբու տղան գերութենէ աղատելու համար, թէ որ ողջ, առողջ կարէնայ գտնել անօրինաց ձեռք: Գեղին կէսը աւէր է. մենք էլ չենք գիտէր թէ գարնան ի՛նչ կը մնա մեզ լինիլ. զարմանք հոն է, որ դու ողջ հախսեր ես այդպէս մինակ. դուք որ հոռոմոց երկրեն կ'ուգաք, Տարոնոյ անցաք, ես կը զարմանամ ինչպէ՛ս անցաք. մենք կը լսենք թէ բոլոր այդ երկիրը արաբացիք զարկեր կը բնակին, ժողովուրդը եթէ չսպաննեն՝ գերի կ'ընեն: Արդէն քու խօսքդ քանի տարի է չի կար, երկու անդամ, որ ես Մոկս գնացի՝ քեզ հարցուցի, քանի տարիէ պանդխտութիւն գնացել է ըսին: Հիմա որ եկար՝ կերակուրդ կեր եւ մեզ պատմէ քու ճամփորդութիւնքդ, քու տեսածներդ, քու այդ Գուրգէն իշխանդ, թէ նա այնպիսի՞ մարդ է որ մեր ցաւոց դարման լինի, թէ ցաւ մ'ալ ինք պիտի աւելնայ մեր վրայ:

Կերան, խմեցին մեր հիւր եւ տանտէր, եւ երբ հանգչեցան, մեր բարեկամ Վահրիճ սկսաւ խառնափնթոր իւր պատմութիւնը պատմել. թէ ինչպէս մէկ երկու քուրդ սպաննելով իւր Մոկաց երկիրը եւ տեսնելով թէ վբեժխնդրութեամբ զինք կը փնտրեն նոցայ ազգականները, խոհեմութիւն համարէր էր քիչ մը ատեն քաշուիլ եւ դէպի Տպէր ուղեւորիի թէ ինչպէս ճամփան հանդիպէր էր Գուրգէն եւ տեսնելով երիտասարդ տղայ մը ազնուական եւ անփորձ, որ ամենեւին առանց իւր ոտքի տակ գտնուած աշխարհքը ճանչելու կ'երթար հեռու աշխարհք բախտ փնտրելու. եւ կարծելով թէ միամիտ տղու մը հետ գործ ունի՝ ինք՝ հասուն երիտասարդ եւ քիչ մը սրիկայ՝ եւ թէ այդ վիճակեն օգուտ քաղել ուզելով՝ նորա ծառայութեան մէջ մտեր էր. «Վասնզի,— կ'ըսէր Վահրիճ,— ես փախստական մը՝ միտք ունէի երթալ ոեւիցէ՛ իշխանի մը ծառայութեան մէջ մտնել. իսկ այս տասնեօթը տարեկան տղուն ծառայութեան մտնելով ինքնիրենս կ'ըսէի. ո՛վ որ զմեզ տեսնէ, նախ իմ վրաս համարում կառնու, զիս սորա դաստիարակը կը կարծե. երկրորդ, երբ սա սկսի իւր գործը կարգին դնել եւ քիչ մը դրամի տէր լինիլ, բնականապէս ես գանձապետ լինելով իրմէ աւելի հարուստ պիտի լինէի. երրորդ, ես զօրաւոր եւ արդէն քանի մը պատերազմ տեսած, քանի մը քուրդ սպաննած, զէնք գործածելու մէջ յաջողակ, այդ տղայ իշխանն պիտի